

ՄԿՐՏԻՉ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Ծնած է Կուտինիա (Քէօթահիա) 1895ին, մօտիկ ազգականր ըլլալով Կոմիտաս Վրդին: Կուտինիայի ազգային վարժարանը աւարտելէ վերջ կը մտնէ բաղարի Խոստի Թրրական վարժարանը, որմէ շրջանաւարտ ըլլալէ յետոյ 1915ին, իբր սպայ, կը կանչուի թրրական բանակը ուր եւ կը մնայ հինգ տարի, Անգարայի եւ շրջակայից մէջ:

Սակայն, յախճապակիի արուեստի նկատմամբ կանուխէն իր զգացած բուռն փափարին յագուրդ տալու համար, արձակուրդի օրերուն՝ կ'աշխատի իւրացնել այդ արուեստը եւ բանակէն վերադարձին՝ կը յաճախէ Քէօթահիայի հայկական յախճապակիի արհեստանոցը:

1919ին, Անգլիական կառավարութիւնը կը հրաւիրէ զինքն ու իր ընկերը, եւ ուրիշ հայ մասնագէտներ՝ նորոգելու հօմերի մզկիրի յախճապակիները: 1922ին ինքը եւ իր ընկերը՝ Պր. Նշան Պալեան, կը հիմնեն իրենց սեական արհեստանոցը եւ այդ օրերուն Պաղեստին բերել կուտայ ընտանիքին միւս անդամները: 1927ին կ'ամուսնանայ Օր. Լիֆլարիսի հետ, որմէ կ'ունենայ երեք մանչ զաւակները, Ստեփան, Յակոբ (վաղամեռիկ) եւ Պերճ: 1948ի Արար եւ Հրեայ ընդհարումներու ժամանակ կը լիսասուի իրենց արհեստանոցը, եւ երկու տարի վերջ առանց յուսահատելու, կը նորոգեն եւ կը վերարանան զայն եւ գործի կը սկսին արտադրելով եկեղեցական եւ այլ զարդանկարներով զեղեցիկ յախճապակիի գործեր, որոնցմով կը զարդարեն եկեղեցիներու եւ մզկիթներու ճակատները: Հոգատարութեան շրջանին եւ այժմ, Հաշիմական կառավարութեան օրերուն բարձր պաշտօնատարներ եւ անձնաւորութիւններ մեծապէս գնահատած են իրենց արուեստի գործերը, Ս. Երկրին եւ արտասահմանի մէջ կը մասնակցին իրենց յախճապակիի գործերով համաշխարհային ցուցահանդէսներուն:

Իր մահէն վերջ, երկու զաւակները, Ստեփան եւ Պերճ, պիտի շարունակն իրենց հօր այն գործը, Պր. Նշան Պալեանի հետ:

Կը վախճանի 20 Նոյեմբեր 1963ին եւ կը թաղուի Զամ - Թաղի զերեզմանատունը:

Հանգուցեալը եւ իր ընկերը, Պր. Նշան Պալեան, եղած են սիրողներ Ս. Աթոռին եւ իրենց ծախքով զարդարած են Ս. Յակոբայ Մայր Տաճարի Աւագ գուռն ու Ս. Մակարի գուռը, եւ բովի զայտ խորանները, Ս. Գէորգի եւ Ս. Նիկոլայոսի, իրենց ծեռարուեստին զեղեցիկ յախճապակիով: Եւ Ս. Աթոռոյս Պատրիարքներու հանդէպ տածած են սէր, յարգանք եւ նուիրում եւ ինչ որ առաջարկուած է իրենց, սիրով եւ պատրաստակամութեամբ կատարած են միշտ:

Նորին Ամենապատուութիւնը եւ Ս. Յակոբեանց Միաբանութիւնը Ս. Հոգի մխիթարութիւն կը մաղթեն իր ազնուափայլ սգաւոր տիկնոց եւ սիրասուն զաւակներուն:

Յաւիտենական հանգիստ իր բարի հոգւոյն:

ԱՆՍ. ՄԱՅՐԱՊԵՏ ՄԱԳԱՌՈՒՏԵԱՆ

14 Դեկտեմբերի Շաբաթ առաւօտ, իր յաւիտենական հանգիստը մտաւ Ս. Աթոռոյս Մայրապետներէն Աննա Մագսուտեան, 74 տարեկան հասակին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Հանգուցեալը ծնած է Հաճըն՝ 1889ին, եւ անած Ատանա: 1946ին Երուսաղէմ գալով կը մտնէ Ս. Աթոռոյս ծառայութեան մէջ որպէս Մայրապետ: Տարիներու անձնուէր ծառայութենէ ետք, յառաջացեալ տարիին պատճառով կը ստիպուի ծառայել անկողնոյ:

Հանգուցեալին թաղման կարգը կատարուեցաւ նոյն օրը, յետ երեկոյեան ժամերգութեան, Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյ մէջ եւ մարմինը ամփոփուեցաւ Զամ - Թաղի պուրակ - զերեզմանատան մէջ: — Հանգիստ իր բարի հոգւոյն: